

**ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ Ո ՄԱ-ԾՁԲ-ԱՎՏՈ/2019/ՃՈ/1**

ք. Երևան

«14» 02 2019թ.

ՀՀ ոստիկանությունը, ի դեմս ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Վ. Մովսիսյանի, որը գործում է ոստիկանության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ» ՍՊ ընկերությունը, ի դեմս Ընկերության գլխավոր տնօրեն Վ. Գրգարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատուց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է **82 000 000** (ութսուներկու միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով¹:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

¹ Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հարկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:²

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

² Պերական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅ. ԸՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ ոստիկանություն

ք. Երևան, Նալբանդյան 130

ՀՀ Ֆինանսների նախարարության

աշխատակազմի գործառնական վարչություն

990013150041

40082


059-09-21

@rambler.ru

Կողմի ստորագրություն

Կողմի ստորագրության պեպի փոփոխակ/

(մատուցողություն)



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ» ՍՊԸ

ք. Երևան, Ծ. Իսակովի 22

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ

Հ/Հ 1570003667300100

ՀՎՀՀ 01557589

հեռ. (374 10) 77-70-10

Էլ. փոստ: info@toyota.am




ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

		Ծառայության											«Ն» դրամ			
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է հրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում													
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը	
1.	50111130/1	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ		20 500 00	20 500 00	41 000 00	41 000 00	41 000 00	61 500 000	61 500 000	61 500 000	82 000 000	82 000 000	82 000 000	82 000 000	82 000 000

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

«Ն» ստրիկանություն
 ք. Երևան, Նալբանդյան 130
 «Ն» Ֆինանսների նախարարության
 աշխատակազմի գործառնական վարչություն
 Հ/Հ 900013150041
 ՀՎՀՀ 01840082
 հեռ. 59 60-21



Էլ. փոստ: info@rambler.ru

Վ. Մովսիսյան

«Ն» ստրիկանության պետի տեղակալ/
 (ստորագրություն)

Կ.Տ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Ն Տ Յ Ո Տ Ա Ե Ր Ե Վ Ա Ն» ՍՊԸ
 ք. Երևան, Ծ. Իսակովի 22
 «ԱՄԵՐԻԱՐԱՆԿ» ՓԲԸ
 Հ/Հ 1570003667300100
 ՀՎՀՀ 01557589
 հեռ. (374 10) 77-70-10
 Էլ. փոստ: info@toyota.am



Գորարյան

գլխավոր տնօրեն/

Անվանումը	Տեխնիկական բնութագրեր և այլ պահանջներ			
Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	<<Տոյոտա երևան>> ՍՊԸ-ից 2007-2018 թթ. ձեռքբերված <<Տոյոտա>> մակիշի մարդատար ավտոմոբիլների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայություն, որում ներառում է՝ -SU - 1 ծառայություն / տեխ. զննում ըստ հավելվածի/ -SU - 2 ծառայություն/ տեխ.սպասարկում և վերանորոգում ըստ հավելված 2-ի/ Օգտագործվող պահեստամասերը պեղք է լինեն նոր, չօգտագործված, <Տոյոտա> ֆիրմայի արտադրության:			
1	Բռնկման համակարգի ստուգում	5 000	5 000	5 000
2	Սառնեցման համակարգի ստուգում	5 000	5 000	5 000
3	Յուղման համակարգի ստուգում	5 000	5 000	5 000
4	Արտածման համակարգի ստուգում	5 000	5 000	5 000
5	Կգորդման համակարգի ստուգում	5 000	5 000	5 000
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	5 000	5 000	5 000
7	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	5 000	5 000	5 000
8	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում			
9	Բաշխիչ տուլիի աշխատանքի ստուգում			
10	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում			
11	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	5 000	5 000	5 000
12	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	5 000	5 000	5 000
13	ABS համակարգի ստուգում	5 000	5 000	5 000
14	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	5 000	5 000	5 000
15	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	5 000	5 000	5 000
16	Թափքի վիճակի ստուգում			
17	Տարբեր ազդեցատների յուղերի որակի և մակարոակների ստուգում	5 000	5 000	5 000
18	Շարժիչի հանում և տեղադրում	100 000	120 000	150 000
19	Նույնը DOHC (2 բաշխիչ լիսեռ) դեպքում			
20	Նույնը կոնդիցիոների դեպքում			
21	Նույնը ԱՓՏ-ի դեպքում			
22	Շարժիչի վերանորոգում			
23	Նույնը DOHC դեպքում	290 000	290 000	420 000
24	Նույնը V6-ի դեպքում			
25	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	8 000	8 000	15 000
26	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	20 000	20 000	20 000
27	Նույնը աջի համար (V6)			
28	Նույնը ձախի համար (V6)			
29	Շարժիչի բուկի գլխիկի հանում և տեղադրում	150 000	200 000	300 000
30	Նույնը աջի համար (V6)			
31	Նույնը ձախի համար (V6)			
32	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում	150 000	200 000	300 000
33	Շարժիչի գլխիկի վերանորոգում	200 000	220 000	340 000
34	Փակամիխի խցուկի փոխարինում	180 000	200 000	300 000
35	Նույնը V6-ի դեպքում			
36	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում	90 000	110 000	170 000
37	Նույնը V6-ի ձախի դեպքում			
38	Նույնը V6-ի աջի դեպքում			
39	Նույնը DOHC դեպքում			
40	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում			
41	Յրիչների փոխարինում SOHC			
42	Նույնը DOHC դեպքում			
43	Ատամնավոր փոկի փոխարինում			
44	Նույնը DOHC դեպքում			
45	Նույնը V6-ի դեպքում			
46	Ծնկած և լիսեռի առջևի խցուկի փոխարինում	20 000	20 000	20 000
47	Նույնը կոնդիցիոների դեպքում			
48	Նույնը DOHC դեպքում			
49	Նույնը կոնդիցիոների դեպքում			
50	Նույնը V6-ի դեպքում			
51	Նույնը կոնդիցիոների դեպքում			
52	Ծնկած և լիսեռի հետևի խցուկի փոխարինում	70 000	80 000	90 000
53	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	70 000	80 000	90 000
54	Միտցային օղակների փոխարինում	280 000	280 000	420 000
55	Նույնը DOHC դեպքում			
56	Նույնը V6-ի դեպքում			
57	Թափանքիկի հանում և տեղադրում	70 000	80 000	90 000

58	Յուղի և յուղի գտիչի փոխարինում			
59	Յուղի պոմպի փոխարինում	100 000	120 000	180 000
60	Լույնը DOHC դեպքում			
61	Լույնը V6-ի դեպքում			
62	Դեկավարման քլոկի վերանորոգում			
63	Բռնկման կարգավորում	150 000	150 000	150 000
64	CO կարգավորում			
65	խարճարակի հանում և տեղադրում			
66	խարճարակի վերանորոգում			
67	Օդի գտիչի փոխարինում			
68	Ինժեկտորի Ֆորսունկաների փոխարինում	19 000	19 000	38 000
69	Ինժեկտորի Ֆորսունկաների մաքրում	30 000	30 000	60 000
70	Բենզամղիչի փոխարինում	12 000	12 000	12 000
71	Վառելիքի գտիչի փոխարինում	12 000	12 000	12 000
72	Վառելիքի բաջի հանում և տեղադրում	40 000	40 000	40 000
73	Տրամյորի հանում և տեղադրում			
74	Տրամյորի վերանորոգում			
75	Հովիարի փոկի հանում և տեղադրում	9 000	9 000	12 000
76	Հովիարի հանում և տեղադրում	14 000	14 000	17 000
77	Ռադիատորի հանում և տեղադրում	30 000	30 000	40 000
78	Լույնը կոնդիցիոների դեպքում	30 000	30 000	40 000
79	Լույնը ԱՓՏ-ի դեպքում	30 000	30 000	40 000
80	Ռադիատորի վերանորոգում			
81	Թերմոստատի փոխարինում	8 000	8 000	10 000
82	Ջրի պոմպի փոխարինում	28 000	28 000	48 000
83	Լույնը DOHC և V-6 դեպքում			
84	Լույնը կոնդիցիոների դեպքում			
85	Ջրի պոմպի վերանորոգում			
86	Լույնը DOHC դեպքում			
87	Լույնը կոնդիցիոների դեպքում			
88	Ընդարձակող բաջի փոխարինում	8 000	8 000	8 000
89	խլարարի հանում և տեղադրում	15 000	15 000	15 000
90	Լույնը DOHC դեպքում			
91	Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում			
92	Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում			
93	Բանվ. կամ գլխ. գլանի վերանորոգում			
94	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում			
95	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում			
96	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում			
97	ՓՏ-ի հանում և տեղադրում			
98	ՓՏ-ի վերանորոգում			
99	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում			
100	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում			
101	Վազքայալի շառժաբերի փոխարինում			
102	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	70 000	80 000	80 000
103	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	230 000	250 000	250 000
104	Լույնը V6-ի համար			
105	ԱՓՏ-ի հանում և տեղադրում	80 000	80 000	80 000
106	Լույնը V6-ի համար			
107	ԱՓՏ-ի վերանորոգում	320 000	320 000	350 000
108	Լույնը V6-ի համար			
109	ԱՓՏ-ի յուղի գտիչի փոխարինում	18 000	18 000	18 000
110	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում			
111	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում վերանորոգումով			
112	Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում			
113	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում			
114	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում, վերանորոգ.			
115	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում			
116	Կարդանային լիսեռի միջ. կախոցի հանում և տեղադրում			
117	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում			
118	Առջևի կամ հետևի կամրջ. լիկատար քանդում և հավաքում			
119	Առջևի կամ հետևի կամրջ. մասնակի քանդում և հավաքում			
120	Առջևի կամ հետևի կամրջ. կիսաստնու հանում և տեղադր.	18 000	18 000	18 000
121	Կիսաստնու առանցքակալի փոխարինում	18 000	18 000	18 000
122	Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում	150 000	150 000	180 000
123	Տրավերսի հանում և տեղադրում	100 000	120 000	140 000
124	Չախ կամ աջ հողակալի հանում և տեղադրում	8 000	8 000	8 000

125	Անվակունդի առանցքակալի փոխարինում	18 000	18 000	18 000
126	Նույնը հետին տանող ամ-երի համար			
127	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	18 000	18 000	18 000
128	Նույնը հետին տանող ամ-երի համար			
129	Չախ կամ աջ հողակալի խցուկների փոխարինում			
130	Չախ կամ աջ հողակալի առանցքակալների փոխարինում			
131	Ցնցամեղմիչի բասակի փոխարինում	16 000	16 000	16 000
132	Ձապանակի հանում և տեղադրում	16 000	16 000	16 000
133	Ձապակի հանում և տեղադրում			
134	Ձապակի վռանների փոխարինում			
135	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	16 000	16 000	16 000
136	Ներքևի լծակի հանում և տեղադրում	12 000	12 000	12 000
137	Ներքևի լծակի վռանների փոխարինում			
138	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում	8 000	8 000	8 000
139	Միջին ձգանի հանում և տեղադրում			
140	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում	8 000	8 000	8 000
141	Վերևի լծակի հանում և տեղադրում			
142	Վերևի լծակի վռանների փոխարինում			
143	Գնդե հողակալների փոխարինում	8 000	8 000	8 000
144	Ծայրակալների հանում և տեղադրում	8 000	8 000	8 000
145	Առջևի կայունարարի հանում և տեղադրում	7 000	7 000	7 000
146	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	7 000	7 000	7 000
147	Առջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում	7 000	7 000	7 000
148	Հետևի զսպանակի փոխարինում	16 000	16 000	16 000
149	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	16 000	16 000	16 000
150	Հետևի ձգածողի հանում և տեղադրում	16 000	16 000	16 000
151	Հետևի երկաթածողի հանում և տեղադրում			
152	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	7 000	7 000	7 000
153	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում	10 000	10 000	10 000
154	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում	12 000	12 000	12 000
155	Անվաբազրի կարագավորում	12 000	17 000	17 000
156	Ձողման աշխատանքներ 1 բառ.սմ համար			
157	Ղեկային կայունի հանում և տեղադրում	40 000	40 000	40 000
158	Նույնը V6-ի համար			
159	Ղեկային կայունի վերանորոգում		60 000	60 000
160	ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում			
161	ՂԿ-ի հողակալների հանում և տեղադրում			
162	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում	30 000	30 000	30 000
163	Նույնը DOHC դեպքում			
164	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում	9 000	9 000	9 000
165	Նույնը DOHC դեպքում			
166	Հիդրոուժեղարարի փողրակի հանում և տեղադրում			
167	Նույնը DOHC դեպքում			
168	Նույնը կոնդիցիոների դեպքում			
169	ՀՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում			
170	ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում			
171	Գլխ. գլանի հանում և տեղադրում	45 000	45 000	65 000
172	Գլխ. գլանի վերանորոգում			
173	Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում	60 000	60 000	75 000
174	Բանվ. գլանի հանում և տեղադրում			
175	Բանվ. գլանի վերանորոգում			
176	Արգելակային համակարգի օդահանում	15 000	15 000	15 000
177	Առջևի սուպարտի հանում և տեղադրում	10 000	10 000	10 000
178	Հետևի սուպարտի հանում և տեղադրում	10 000	10 000	10 000
179	Առջևի սուպարտի վերանորոգում	15 000	15 000	15 000
180	Հետևի սուպարտի վերանորոգում	15 000	15 000	15 000
181	Արգելակային փողրակի փոխարինում	25 000	25 000	25 000
182	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	7 000	7 000	7 000
183	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում			
184	Հետևի կոճղակների փոխարինում	7 000	7 000	7 000
185	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	8 000	8 000	8 000
186	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	8 000	8 000	8 000
187	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում	30 000	30 000	30 000
188	ABS-ի հանում և տեղադրում	75 000	75 000	75 000
189	ABS-ի վերանորոգում			
190	Չեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում	17 000	17 000	17 000

191	Չեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում			
192	Էլեկտրասարքավորման վերանորոգում			
193	Չափիչ սարքերի համում և տեղադրում			
194	Գեներատորի համում և տեղադրում			
195	Նույնը V6-ի դեպքում	25 000	25 000	35 000
196	Նույնը հիդրոուժեղարարի դեպքում			
197	Գեներատորի վերանորոգում	150 000	150 000	150 000
198	Մեկնարկիչի համում և տեղադրում	20 000	20 000	40 000
199	Մեկնարկիչի վերանորոգում	30 000	30 000	30 000
200	Առքի լապտերի համում և տեղադրում	15 000	15 000	15 000
201	Չեռքի լապտերի համում և տեղադրում	10 000	10 000	10 000
202	Բռնկման կողպեքի համում և տեղադրում	25 000	25 000	25 000
203	Վազքայափի համում և տեղադրում	24 000	24 000	24 000
204	Վազքայափի ճոպանի համում և տեղադրում			
205	Սարքերի պանելի համում և տեղադրում	75 000	85 000	85 000
206	Արագաչափի համում և տեղադրում	24 000	24 000	24 000
207	Ազդանշանի համում և տեղադրում	5 000	5 000	5 000
208	Սպակեվաջիչի շարժիչի համում և տեղադրում	14 000	14 000	14 000
209	Դոմերի կենտրոնական փականի համում և տեղադրում	15 000	15 000	15 000
210	Ազդանշանային համակարգի տեղադրում			
211	Սազնիտոյայի տեղադրում	10 000	10 000	10 000
212	Վառոցքային լարերի համում և տեղադրում			
213	Էլ/հաղորդակարների մասնակի վերանորոգում			
214	Էլ/հաղորդակարների հիմն. խուրցի համում և տեղադրում			
215	Էլ/հաղորդակարների երկրորդ. խուրցի համում և տեղադրում			
216	Էլեկտրական տվիչների փոխարինում			
217	Էլեկտրական անջատիչների փոխարինում			
218	Վառոցքի մոմերի փոխարինում	5 000	5 000	20 000
219	Կոնդիցիոներների լիցքավորում	30 000	30 000	30 000
220	Կոնդիցիոներների վերանորոգում			
221	Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում գին 1 քառ.դմ - ի համար			
222	Ավտոմեքենայի լվացում			
223	Անիվի համում և տեղադրում			
224	Անվարդի վերանորոգում	1 000	1 000	1 000
225	Անիվի բալանսավորում			
226	Անիվի վալց	2 000	2 000	2 000
227	CO-զոդման աշխատանքներ, գին 1 քառ.սմ - ի համար			
228	Խառատային աշխատանքներ			
229	Փակամագործի աշխատանքներ			
230	Ջարչարկի ծառայություն գին 1կմ, համար			

1,1	Շարժիչի բլոկ			
2,1	Շարժիչի գլխիկ	1 400 000	1 600 000	2 000 000
3,1	Բարձիկ	160 000	200 000	200 000
4,1	Շարժիչի գլխիկի միջադիր	85 000	90 000	95 000
5,1	Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ	10 000	15 000	12 000
6,1	Շարժիչի բաշխիչ լիսեռ	140 000	200 000	230 000
7,1	Շարժիչի փական դուրս մղող	2*170000	500 000	240000, 260000
8,1	Շարժիչի փական ներս մղող	8*20000	8*28000	8*28000
9,1	Շարժիչի փականի խցուկ	8*15000	8*18000	8*18000
10,1	Ծնկածև լիսեռ	16*5000	16*5000	16*5000
11,1	Ծնկածև լիսեռի խցուկ առքևի	410 000	520 000	620 000
12,1	Ծնկածև լիսեռի խցուկ հետևի	6 000	6 000	6 000
13,1	Ծնկածև լիսեռի արմատական ներդիրներ	17 000	25 000	25 000
14,1	Ծնկածև լիսեռի շարժաթևային ներդիրներ			
15,1	Չեռքի շարժաթևային տափոդակ			
16,1	Մխոց			
17,1	Մխոցային օղակներ	4*17000	4*40000	4*29000
18,1	Ատամնամիլ	50 000	60 000	78 000
19,1	Ատամնավոր փոկ	130000, 115000	115000, 177000	119000, 177000
20,1	Շոթա			
21,1	Չիդրոնձգան	60 000	75 000	78 000
22,1	Չրիչ			
23,1	Չիդրոնիչի			
24,1	Բաշմակ			
25,1	Չանգատարար	16000, 38000	16000, 31000	15000, 32000
26,1	Թափանիլ			
27,1	Թափանիլի պսակ			
28,1	Խցուկ բաշխիչ լիսեռի			
29,1	Շկիլ			
30,1	Շարժաթև	75 000	120 000	120 000
31,1	Կարտերի միջադիր			
32,1	Միջադիր		8 000	8 000

33,1	Յուղ շարժիչի հանքային, 1 լիտր			
34,1	Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1 լիտր			
35,1	Յուղ շարժիչի սինթետիկ, 1 լիտր			
36,1	Յուղի գտիչ	5 500	5 500	5 500
37,1	Յուղի պոմպ	5 000	5 000	5 000
38,1	Յուղի պոմպի շարժաքեր			
39,1	Յուղի ռադիատոր			
40,1	Յուղի փողոցակ			
41,1	Յուղի ծողակ			
42,1	Վառոցքի մոմ			
43,1	Բենզոլաք	4*8000	4*8500	4*8500
44,1	Խառնարակ	210 000	255 000	255 000
45,1	Խառնարակի վերանորոգման հավաքածու			
46,1	Ինժեկտորի ֆոդոսնկա			
47,1	Վառելանյութի մոխի էլեկտրական	4*110000	4*100000	4*120000
48,1	Վառելանյութի մոխի մեխանիկական	160 000	170 000	170 000
49,1	Վառելանյութի գտիչ			
50,1	Վառելանյութի գտիչ նուրբ մաքրման	65 000	30 000	45 000
51,1	Վառելանյութի փողոցակ			
52,1	Աքսելերատորի ճուպան			
53,1	Օդի գտիչ			
54,1	Տերմաստիճանային տվիչ	8 000	13 000	15 000
55,1	Յուղի տվիչ			
56,1	Բաշխիչ լիսեռի տվիչ			
57,1	Օդի ծախսի տվիչ			
58,1	Արագաչափի տվիչ			
59,1	Հովիարի տվիչ			
60,1	Տրի տվիչ			
61,1	Բենզոլաքի տվիչ			
62,1	Մարման ընթացքի կարգավորիչ	24 000	23 000	35 000
63,1	Մարման ընթացքի տվիչ			
64,1	Ղեկավարման համակարգիչ			
65,1	Պարապ ընթացքի տվիչ	700 000	780 000	725 000
66,1	Դրոսելային փականի տվիչ			
67,1	Թբվածնի տվիչ			
68,1	Հովիարի փոկ			
69,1	Հովիար	32 000	65 000	65 000
70,1	Ռադիատոր	28 000	2*50000	2*50000
71,1	Ընդարձակող քաք	175 000	230 000	230 000
72,1	Ռադիատորի փողոցակ	75 000	45 000	48 000
73,1	Թերմոստատ			
74,1	Տրի պոմպ	23 000	28 000	25 000
75,1	Տրի պոմպի առանցքակալ	55 000	75 000	70 000
76,1	Տրի պոմպի բևակ			
77,1	Սառեցման հեղուկ, 1 լիտր			
78,1	Տրի պոմպի սղմանիվ	4 000	4 000	4 000
79,1	Հոլովակ			
80,1	Փոկ			
81,1	Փոկ կոնդիցիոներ	32 000	37 000	37 000
82,1	Շողակ			
83,1	Խլարարի ներդիր			
84,1	Խլարարի կախոց	48 000	3*25000	3*25000
85,1	Կրոնշտեյն	3*8000	2*5000	2*5000
86,1	Անուր (համուտ)		2*10000	2*10000
87,1	Խլարար			
88,1	Ռեզոնատոր	700 000	1 050 000	1 050 000
89,1	Վառարանի ռադիատոր	190 000	285 000	285 000
90,1	Կցորդման բանվորական գլան			
91,1	Կցորդման գլխավոր գլան			
92,1	Կցորդման գլանի վերանորոգման հավաքածու			
93,1	Կցորդման տանող սկավառակ			
94,1	Կցորդման տարվող սկավառակ	180 000		
95,1	Կցորդման առանցքակալ			
96,1	Կցորդման փողոցակ			
97,1	Փոխանցման տուևի			
98,1	ՓՏ-ի առքևի խցուկ	2 200 000	4 000 000	4 000 000
99,1	ՓՏ-ի հետևի խցուկ			
100,1	ՓՏ-ի առանցքակալ			
101,1	ՓՏ-ի առաջնային լիսեռ		15 000	13 000
102,1	ՓՏ-ի միջանկյալ լիսեռ			
103,1	ՓՏ-ի եղանիկ			
104,1	ՓՏ-ի ատամնանիվ			
105,1	Համաժամիչ			
106,1	Մուխտ			
107,1	ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	15 000		
108,1	ԱՓՏ-ի գտիչ	35 000		
109,1	ԱՓՏ-ի սկավառակների հավաքածու		25 000	33 000
110,1	ԱՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ			
111,1	Տրանսմիսիոն յուղ, 1 լիտր		125 000	120 000
112,1	ԱՓՏ յուղ, 1 լիտր	15 000	8 000	8 000
			8 000	8 000

113,1	ՓՏ-ի առաքման լիսեռ			
114,1	Հերմետիկ			
115,1	Բաշխիչ տուփ			
116,1	Բաշխիչ տուփի խցուկ			
117,1	Բաշխիչ տուփի առանցքակալ			
118,1	Բաշխիչ տուփի առամնամիվ			
119,1	Բաշխիչ տուփի լիսեռ			
120,1	Կարդանային լիսեռ			
121,1	Էլաստիկ մուֆտ			
122,1	Կարդանային լիսեռի միջամկյալ հենակ			
123,1	Կարդանային լիսեռի խաչուկ			
124,1	Հետևի կամ առջևի կամրջակ			
125,1	Ուղղակտոր			
126,1	Գլխավոր փոխանցման առամնամիվների կոմպլեկտ			
127,1	Ղիֆֆերենցիալ			
128,1	Ղիֆֆերենցիալի սատելիտ			
129,1	Տանող առամնամիվի խցուկ			
130,1	Տանող առամնամիվի առանցքակալ			
131,1	Ղիֆֆերենցիալի առանցքակալ			
132,1	Կիսասուն			
133,1	Կիսասունու առանցքակալ	380 000	380 000	380 000
134,1	Կիսասունու միջադիր	20 000	40 000	35 000
135,1	Կիսասունու խցուկ			
136,1	Կարգավորիչ տափողակ	8 000	8 000	8 000
137,1	Տրավերս			
138,1	Կրոնշտեյն	420 000	745 000	745 000
139,1	Չախ կամ աք հողակալ			
140,1	Չախ կամ աք հողակալի փոշեփկնոց			
141,1	Անվակունդ			
142,1	Անվակունդի խցուկ			
143,1	Անվակունդի ներքին առանցքակալ			
144,1	Անվակունդի արտաքին առանցքակալ			
145,1	Հետևի անվակունդի ներքին առանցքակալ	2*190000	2*245000	2*170000
146,1	Հետևի անվակունդի արտաքին առանցքակալ			
147,1	Չախ կամ աք հողակալի խցուկ			
148,1	Հարվածամեղմիչի թասակ			
149,1	Չսպանակ	2*45000	2*52000	2*55000
150,1	Առջևի հարվածամեղմիչ	2*42000	2*47000	2*50000
151,1	Հարվածամեղմիչի փոշեփկնոց	2*70000	2*80000	2*84000
152,1	Հարվածամեղմիչի վռան	2*12000	2*13000	2*12000
153,1	Ներքևի լծակ			
154,1	Ներքևի լծակի վռան	2*85000	2*100000	2*100000
155,1	Վերևի լծակ			
156,1	Վերևի լծակի վռան			
157,1	Գնդե հողակալ			
158,1	Առջևի կայունարար	2*37000	2*43000	2*43000
159,1	Առջևի կայունարարի վռան	90 000	100 000	105 000
160,1	Առջևի կայունարարի առջևի վռան	2*8000	2*5000	2*5000
161,1	Հետևի զսպանակ			
162,1	Հետևի ցնցամեղմիչ	2*40000	2*50000	2*50000
163,1	Հետևի մետաղածող (շտանգա)	2*30000	2*100000	2*90000
164,1	Հետևի մետաղածողի (շտանգա) վռան		2*45000, 4*60000	2*45000, 4*60000
165,1	Հետևի անկյունագծային լծակ			
166,1	Անկյունագծային լծակի վռան	600 000		
167,1	Չսպակ (ռեսսորա)	2*36000		
168,1	Չսպակի վռան			
169,1	Չսպակի միջադիր			
170,1	Չսպակի բռնիչ			
171,1	Աք կամ ձախ ձգան			
172,1	Ծայրակալ			
173,1	Չզան մեջտեղի			
174,1	Անվահեծ	4*280000	4*350000	4*380000
175,1	Ղեկային կայուն			
176,1	Ղեկային կայունի առանցքակալ	390 000	430 000	430 000
177,1	Ղեկային կայունի խաչուկ			
178,1	Հիդրոուժեղարար			
179,1	Հիդրոուժեղարարի փոկ			
180,1	Հիդրոուժեղարարի վերամորոզման կոմպլեկտ			
181,1	Հիդրոուժեղարարի պոմպ			
182,1	Հիդրոուժեղարարի պոմպի վերամորոզման կոմպլեկտ			
183,1	Ղեկային ձող			
184,1	Ղեկային ձողի ծայրակալ	120 000	100 000	105 000
185,1	Հիդրոուժեղարարի յուղ, 1 լիտր			
186,1	ճոճանակ			
187,1	ճոճանակի վռան			
188,1	Գլխ. զլան	160 000	170 000	170 000

Պայմանագրի կողմ _____

 գտնվելու վայրը _____
 հհ _____
 հվհհ _____

Պատվիրատու _____

 գտնվելու վայրը _____
 հհ _____
 հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐՁՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.
 Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.
 Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ
 « » « » 20 թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն
 արձանագրությունը
 հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ
 մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները՝

Մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների

N	անվանումը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
		տեխնիկական	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի		
	Բնութագրի համառոտ շարա-դրանքը						

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

Ծառայությունը ընդունեց

_____ ստորագրություն
 _____ ազգանուն, անուն
 Կ.Տ.

_____ ստորագրություն
 _____ ազգանուն, անուն
 Կ.Տ.

Հավելված 3.1
2019 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կիսման ամսաթիվը _____ պայմանագրի համարը _____
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման
նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն
Ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն
Ստորագրություն